

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
նչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1599-6 2

ԹԻՄՈՒՐՋԱՆ ՈՂԱԲԱՇ

ԹՐՔՈՒՅԻ ԵՍՄԱՆ

Ա. ԱՍՏՐԱՌԻՄՈՎ

Հ Ո Ր Ա Ն

ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ

Թարգմ. ՍԻՄԱԿԻ

ՅԵՐԵՎԱՆ

ՊԵՏՅՐԱՏ

1929

ԹԻՄՈՒՐՋԱՆ ՈՂԱԲԱՇ


ԹՐՔՈՒՅԻ ԵՍՄԱՆ

—
Ա. ԱՍՏՐԱՌԻՄՈՎ

2 Ո Ր Ա Ն


—
ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ

Թարգմանություն՝ ՍԻՄԱԿԻ



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ—1929



16724

A $\frac{11}{38751}$

STANDARD REPORT

STANDARD REPORT

STANDARD REPORT

STANDARD REPORT

STANDARD REPORT

STANDARD REPORT

ԹԻՄՈՒՐՋԱՆ ՌԴԱԲԱՇ


ԹՐՔՈՒՅԻ ԵՍՄԱՆ

Ա. ԱՍՏՐԱՌԻՄՈՎ

Չ Ո Ւ Ա Ն

ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ

Թարգմանություն ՄԻՄԱԿԻ



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ—1929



12424

A 38751

Էռչս Ե ճեմում Մոցդազլիարչուքյան կից գործող Մանկա-
կան գրականության Հանձնաժողովի հավանությամբ:

№ 44

ՊԵՏՏՐԱՏԻ ՅԵՐԿՐՈՐԴ ՏՊԱՐԱՆ
ՅԵՐԵՎԱՆՈՒՄ

Հր. № 932

Պ. № 194

Տիրաժ 2.500

Գրառեպվար № 1709 ր.

ԹՐԲՈՒՅԻ ԵՍՄԱՆ

— Հը՛, ի՞նչ ե, արդեն լուր կա:

— Կա, կա:

— Ո՞վ բերեց:

— Մուրադ աղան հիմա յեկավ, նա պատմեց:

— Բա ի՞նչ պատմեց: Կընդունե՞ն մեզ:

— Արդեն ընդունել են: Մուրադ աղան ինքը չեղել ե
դպրոցում, տեսել ե իրեն գլխավորին:

— Ճիշտ, կընդունե՞ն: Դե շուտ, պատմիր:

— Դե, ասում եմ ելի, վոր ընդունել են: Ասել են
յերեխաներին բերեք: Կնշանակի գնում ենք:

— Հայդե՛, հայդե՛, գնում ենք:

Այսպես խոսում ելին յերկու աղջիկներ, Եմինեն և
Նաման:

Խոսակցութունը լի չեր կենդանությամբ: Աղջիկները
ծափ եյին տալիս, թռչկոտում, պտտվում մի վտաքի վրա:
Նրանց աչքերում փայլվում ելին մաքուր ու անկեղծ
ուրախության կայծերը: Ուրախութունից նրանք չգիտե-
լին ինչ անեն: Նրանք այնպես յերազմւմ ելին սովորելու
գնալու համար: Ահա իրականացավ նրանց յերազը:

Սենյակում ելի յերկու մաքր կար, վորոնք ուրա-
խությամբ դիտում ելին այս տեսարանը: Նրանք յերկու
ծերունիներ ելին: Պապը ծխամորճը բերանին նստել եր
պատի տակ, Տատը, թեկերը վեր քաշած, վառարանի մոտ

տանձ եր կտրտոււմ: Այդ միջոցին որորոցում յեղող փոքրիկ Բիլլուլը դադադած ճչում եր սուր ու ծակող ձայնով:

— Ի՞նչ ե պատահել փոքրիկին: Գնա, տես, — ասաց պապը, դառնալով պառապին և ծխամորճը բերանից հանեց: Տատը փորձում ե վեր կենալ, յերկու ձեռքով հենվում ե դեանին, ախ ե անում ու հառաչում:

— Ի՞նչ ե պատահել եդ աղջիկներին:

— Ես ի՞նչ աղմուկ բարձրացրին: Յերեխային զարթեցրին: Վոչ միայն յերեխային, նրա՛ք իրենց աղաղակներով մեռելներին ել կզարթեցնեն:

— Հասկանալի յե, յերեխաներն ամեն բանի համար ուրախանում են:

— Ի՞նչ ել լինի մենք մեր Եսմային իր հոր ու մոր մահից հետո եսպես ուրախ չենք տեսել:

Այսպիսի նկատողութուններ եյին անում ծերունին ու պառապը, նայելով աղջիկներին: Այդ ժամանակ փոքրիկ Բիլլուլը որորոցում ավելի ուժեղ չեր ճչում: Ծերերն անհանգստացան:

— Եսմա, եդ ի՞նչ ես անում: Միթե չես լսում: Յերեխին նայիր, ասաց տատը: Բայց Եսման խոսակցությամբ տարված, վռչինչ չեր լսում:

— Թո՛ղ, բան չունես, թող ուրախանա վորբիկը, կանգնեցրեց պապը պառապին: Ինքդ նայիր յերեխային:

Ծերերն իրար հենվելով, ջանք ելին թափում վերկենալ, ախ յին քաշում և կրկնում, «արաբիմ», «լարաբիմ»: Իսկ աղջիկնեոն ինչքան ուժ ունեյին ուրախանում եյին, զվարթ ոչին ու յերջանիկ, մոռացե եյին, թե ինչ ե կատարվում իրենց շուրջը:

— Ասում են ենտեղ շատ յե... և ասներ կան:

- Տեանես յերեխաներին ուսուցիչները ծեծում են:
- Ձե, ուսուցիչները յերեխաների հետ խաղում են:
- Այլ լավ բան: Գնանք, գնանք շուտով:

Այդ ժամանակ դուռը բացվեց, ներս մտավ տանտիրուհին: Նրան Յաշուր-Դուդու յեյին ասում: Մի վայրկյանը բավական եր, վոր նա իմանար, թե ինչ ե կատարվում սենյակում: Լացող յերեխային նկատելով, նա իսկուհի հարձակվեց Նս'մայի վրա:

— Այ սատկես դու, հահ, կուրանան քո աչքերը, չես տեսնում, վոր յերեխան լաց ե լինում: Քեզ ինչի՞ յեմ հաց տալիս: Շո՛ւն:

Ծերուհին ու պառավը կարծես թե քարացան իրենց դիրքերում: Նրանց դեմքերը ձգվեց ու սառավ, ձեռքներն ել ավելի սկսեցին դողդողալ: Նսմայի սիրտը խփեց, ինքըն ել գունատվեց, սակվեց: Այդ միջոցին Նմինեն դուրս ծկվեց:

Տանտիրուհին ճանկեց Նս'մային և սկսեց մազերից քռնած քարշ տալ նրան, հանդիմանություն, հագոցանք, սպառնալիք թափել գլխին: Նա բոլորովին մոռացավ իր յերեխային, վոր լացից ճաքում եր:

Ուրիշ անգամ յերբ Նս'մային ծեծում եյին (իսկ դա բավական հաճախ եր կրկնվում), չոգում եր և ներողություն եր խնդրում: Այս անգամ նա այդպես չարավ: Նա լաց չեղավ, ներողություն չխնդրեց: Նա խեղդված ձայնով, բաց զայրացած չեղանակով ասաց.

— Սպասի՛ր, շուտով կաղատվես ինձնից, չես գընում եմ:

— Մի տես ե, դեռ պատասխան ել ե տալիս, խողի ճնւտ: Քո հոր ծոցը գնաս: Յես քեզ ցուլց կտամ:

Ծերունիները վրդովված դիտում էին այս պատկերը: Վերջապես նրանց համբերությունը հատալ: Պապը հավաքեց իր բոլոր ծեր ուժերը, մոտեցավ տանտիրուհուն և հանդիմանելով ասաց նրան.

— Հարսի, ինչո՞ւ ես ծեծում չերեխային: Թող, մի անիբռ Այս միջամտությունն ել ավելի զայրացրեց տանտիրուհուն: Նա սկսեց ավելի բարձր աղաղակել և ավելի ուժով թակել թշվառ աղջկանը:

Հավաքվեցին հարևանները, չերեխաներ և նույն իսկ հասակավորներ ու պատուհանից սկսեցին նույեյ թե ինչ ե կատարվում: Կարող եր այդ տեսարանը չերկար շարունակվել: Ես'մալի բաղդից տանտերը, Իբրահիմ աղան, վերադարձավ: Նա գոռաց կնոջ վրա: Ամեն ինչ հանգստացավ:

Եսման—12 տարեկան մի աղջիկ եր, նիհար ու գունատ: Շորերը հին եյին, իսկ կոշիկ, վաղուց եր, վոր չեր հագել: Անցյալ ձմեռ նրա ծնողները մեռել էին սովից: Նա գյուղական դպրոցի վերջին դասարանուհին եր: Ուսուցիչը նրան գովում եր, հայրն ուրախ եր նրա հառաջադիմությամբ: Գուցե նա ելի կշարունակեր սովորել, յեթե հայրը կենդանի մնար: Ես'մալի հայրը մահից առաջ, ուսուցչին պատահելով, խոսեց նրա հետ Եսմալի մասին:

— Իսմալիլ Եֆենդի: Մեր մթությունը— դա մեր ցամա ե: Յես այժմ հիշում եմ, թե դու ինչպես եյիր զգուշացնում, վոր սով կլինի, պետք ե ձմեռվա պաշար պատրաստել, իսկ մենք չեյինք հավատում, ծիծաղում էյինք: Հիմա վատ ե բաններս, սովից կուռչենք: Միայն, ա՛յ ինչ պիտի խնդրեմ քեզ: Յեթե դու կենդանի ազատ-

վեսս, հոգ տար նամայի մասին, ոգնիր նրան: Թող սո-
վորի:

Ուսուցիչը հուզվեց, նա խոսք տվեց, վոր կկատարի
նրա խնդիրը:

Նսման այժմ ապրում ե իր հորեղբոր մոտ ամենա-
աննախանձելի վիճակի մեջ: Նա կատարում ե տնային
բոլոր աշխատանքները. ջուր ու փայտ ե կրում, անասուն-
ները մարգագետին ե քշում, Հաճախ դաշտն ե գնում՝ աշ-
խատելու: Այս բոլորի համար նրա հորեղբոր կինն ամեն
որ և հանդիմանում ե և ծեծում: Ինքը՝ հորեղբայրը սի-
րում ե նրան և ցանկանում: Հորեղբայրը հասկանում ե,
թե ինչեր ե քաշում խեղճ Նսման և ցավակցում ե նրա
դառը վիճակին: Բայց ի՞նչ անինա: Նամայի պատճառովնամի
քանի անգամ թափել ե իր կնոջը Յաշուր-Դուդուլին, բայց
տեսնելով, վոր դա չի ոգնում, այլ ընդհակառակը ավելի
յե վատացնում Նսմայի դրությունը, թողեց:— Ինքը Յա-
շուր-Դուդուն իր մանուկ հասակում ծեծից ավելի ուրիշ
բան տեսած չլինելով, իր բոլոր խստությունը, բաղդի
վրեժխնդրության բոլոր թույնը, թշվառ Նսմայի գլխին
եր թափում:

Հորեղբայրը շատ ուրախացավ, չերբ միանգամ ամա-
ռը ուսուցիչն ասաց նրան, — Նամային քաղաք ուղարկենք
սովորելու: Գոհ ու բավական նա տանն ասաց Նսմային:—
Քեզ քաղաք կուղարկեմ՝ սովորելու, եստեղ քեզ համար
հանգիստ կլինի:

Գլուղից չորս աղջիկ ելին ուղարկում քաղաքի թուր-
քական դպրոցը—նրանց թվում և Նսմային: Նրանք բո-
լորը անհամբեր լուրի ելին սպասում քաղաքից. բոլորից
ավելի անհանգստանում եր Նսման:

*
* *

Ամառն անցավ: Արեգակը պայծառ ե լուսավորում,
բայց արդեն տաքութիւն քիչ ե տալիս: Հասավ մռայլ,
անհլուրդնկալաշունը: Մտիկ սարերի բուսականութիւնը
փոխեց իր տեսքը, վարդագունեց, դեղնեց, թառամեց:

Նսման ընկերուհիների հետ քաղաք ե գնում, ուսու-
ցիչն ուղեկցում ե նրանց: Նմինեն հարցնում ե ուսուց-
չին:

— Կընդունէ՞ն մեզ:

— Կընդունեն: Միայն դուք պետք ե քննութիւն
տաք: Հետո բժիշկն ել պետք ե քննի, նայի ձեզ: Յեթե
քննութիւնը հաջող կտաք և բժիշկը ձեզ առողջ կգտնի,
ապա կնդունվիք դպրոց: Վերոշել են մեր գլուղից յերեք
հոգի ընդունել:

Այս խոսքերը խոցեցին Նսմայի սիրտը: Նրա տրա-
մադրութիւնը միանգամից ընկավ: Յերկյուղած ձայնով
հարցրեց նա:

— Իսմայիլ-աղա, իսկ յեթե քննութիւններս հաջող
չանցնի և բժիշկն ել հիվանդ համարի, ես ժամանակ ի՞նչ
կանենք:

— Իսկի, ի՞նչ,—կվերադառնանք գյուղը:

Այս խոսքերի վրա Նսման միանգամից գուցնը գցեց,
շնչառութիւնն արագացավ, սիրտն սկսեց ավելի ուժգին
խփել: Նրա դառը բաղդից, արեւը նրա համար մի բոպե
փալեց, բայց սև ամպերն իսկույն պատեցին հորիզոնը:
Մնացած ամբողջ ճանապարհը նրա ուշքն ու միտքը կենտ-
րոնացած եր այն խնդրի վրա, թե ինչպես կանցնի քննու-
թիւնը, ինչ կասի բժիշկը:

— Ախ, թող մի ինձ ընդունեն դպրոց: Խոստանում

եմ՝ վոչ մի մեղք չանելի՝ վոչ վորի սուտ չեմ ասիլ, վոչ վորի չեմ նեղացնիլ—նույն իսկ կենդանիներին, վոչ վորի մասին վոչ մի վատ բան չեմ խոսիլ։—Այսպես եր շնջում ինքն իրեն թշվառ աղջիկը։

Յերբ բարձր լեռների միջի հովիտը մտան, աղջիկ-ներն սկսեցին այս յերգը.

«Ահա իջնում եմ սարերից յես ցած,

Վսակե նաղումն ել իմ ձեռքիս բռնած»

Բոժոժների ձայնը արձագանք եր տալիս լեռներում։ Աղջիկներն ուրախացան։ Բայց այդ ուրախ ձայները չեկին կարողանում ցրել Նամայի տխուր մտածմունքները։

Նա հիշում եր այն յերջանիկ որերը. յերբ նա ապրում եր իր հոր ու մոր հետ։ Ահա նրանք գնում են ծխախոտ կտրելու։ Ի՞նչ ուրախ եկին աշխատում։ Ի՞նչ մաքուր եր ողբ։ Ուրախ վազում ե առվակի ջուրը։ Նաման ծաղիկներ ե քաղել ու տանում ե մորը։ Նրանց մոտ կայտառ վազ-վզում եր աղվամազի նման փափուկ բրդով ծածկված գառնուկը։ Ծխախոտ քաղելը վերջացնում են։ Հայրը ծխախոտը փնջերի յե բաժանում, իսկ մայրն ու Նաման իրենց դամբուղում արմատիք են հավաքում ու տուն են տանում։ Բայց օրեր վառում ե։ Նաման հոգնել ե։ Մայրը նրան գրկում, համբուրում ե։ Նաման հիշում ե այս, նորից վերապրում ե այս յերջանիկ ժամանակը։ Ուրախության կայծեր են փայլում նրա աչքերում։

Բայց ա՛յ. մի ուրիշ պատկեր։ Դուրսը ցուրտ ե։ Տանը վոչ-վոք չկա, վոր կարողանար կրակ վառել։ Հայրն արդեն միջանի որ ե, վոր տուն չի վերադառնում։ Շատ քիչ հույս կա, թե նա կարող ե վերադառնալ։

Սովի, ավերման, մոր մահվան մռայլ պատկերներն

անցնում են նրա առջևից: Վերջապես հորեղբոր տան վերջին որերի կյանքը անվերջ տանջանքների ու վիրավորանքների ծանր որերը...

Այսպիսով, քաղաք ուղևորվելու որը, նրա բոլոր ընկերուհիներին ճանապարհ ելին դեռում նրանց ծնողները, ազգականները: Իսկ թշվառ Նաման վոչ վոք չունեն, վոր ճանապարհ դնելիս նրան փաղաքներ, համբուրեր: Նրա հորեղբայրը դեռ նախորդ որը հրաժեշտ տվեց նրան ու գործով ուրիշ տեղ գնաց: Իսկ մորաքույրը, նույնիսկ այս վերջին որը մի առիթ գտավ նրան հայհույելու և ծեծելու: Հրաժեշտի հանդիսավոր ժամին, Նաման, նայելով հարազատներով շրջապատված իր ընկերուհիներին շատ ավելի սուր կերպով դգաց իր մենակուլթյան վիշտը, իր վիճակի դառնությունը:

Գլուղի դիմացի բլրի վրայով անցնելիս, Նաման վերջին անգամ իր հայացքը դեցեց մայրենի տեղերի վրա: Նրա աչքին ընկավ այն տեղը, ուր առաջ իր հոր տունն էր, վորից սխալն վողորմելի ավերակներ էին մնացել: Աչքին ընկավ միզարը (գերեզմանատուն), ուր թաղված էին նրա ծնողները: Այս բոլոր պատկերներն ավելի ու ավելի էին բորբոքում նրա հոգու վերքերը: Նա ուզում էր լաց լինել, վորպեսզի արցունքով սիրտը հովացնի, բայց արցունքները չէին գալիս:

Յերևում էր, ինչպես գնացողներին գլուղից թաշկինակ շարժելով «գնաս բարով» էին ասում: Եվ ինչն հասկացավ Նամայի միտքը և ուզենալով մխիթարել նրան, ասաց.

— Դու բաղդավոր ես, Նամա: Դու վոչ վոք չունիս, վորին քո գնալը վիշտ պատճառեր: Իսկ իմ մայրը, այ իմ գնալուց հետո դեռ չերկար ժամանակ լաց պլտի լինի:

*
* *

Դպրոցի բակի լայն դռները ճոճալով բացվեցին և սալը բակը մտավ: Աղջիկները աղմուկով դուրս թափվեցին դպրոցական շենքից ու շրջապատեցին նորյեկներին: Աշակերտուհիների մեջ կալին հարևան գյուղերից միջանի աղջիկներ, վորոնց նսման ճանաչում էր: Նսման շտապեց ոգտվել ալդ բանից: Առաջին հարցը, վորով դիմեց նա ալդ աշակերտուհիներին, այս էր.

— Բժիշկն այստե՞ղ է: Նա բժշկին յերևակայում էր մի մեծահասակ, սարսափելի մարդ: Ուսուցիչներից նա անքան էլ չէր վախենում, քանի վոր հիշում էր իր ուսուցչին, վորն այնպես քնքույշ էր վերաբերվում իրեն հետ:

Ծանոթ աղջիկները շրջապատեցին նսմային և սկսեցին իրար առաջ կտրելով հարցեր տալ նրան:

— Ի՞նչ կա գյուղում, առո՞ղջ են արդյոք, ի՞նչ զիտես մեր գյուղի մասին:

Նսման հալոնում էր, ինչ վոր ինքը զիտեր: Նսմայի հայրենակցուհիներն սկսեցին ցույց տալ նրան դըպրոցում յեղած բաները: Նրանք պտտեցին ամբողջ բակը, դասարանները, սեղանատունը, խոհանոցը, ննջարանները:

— Սո՛ ի՞նչն է:

— Սա գրասենյակն է:

— Նստեղ ի՞նչ են անում:

— Վարիչն ու ուսուցիչները այստեղ են պարապում: Յերեխաներին այստեղ են ցուցակագրում:

— Նոր աշակերտներին եստե՞ղ են ընդունում:

— Այո՛, այստեղ:

Յերեկոն հասավ: Մթնեց: Ուսուցիչն լեկավ, բարևեց

յերեխաներին և սկսեց հարց ու փորձ անել, թե վոր գլուղերից են յեկել: Զրույցը յերկար տևեց: Հետո ուսուցիչը գնաց — ասելով:

— Հիմա, գնացեք քնելու, յերեխեք, հանգստացեք, իսկ վաղը ձեզ մի թեթև քննություն կանենք, բժշկը կնայի ձեզ, հետո կսկսենք պարապել:

Այդ գիշերը Նամայի համար շատ անհանգիստ և անսահման յերկար գիշեր եր: Մի մեծ սենյակում, վոր իր մեծությամբ բակի եր նման, Ղրիմի բոլոր ծալերից յերեխաներ ելին հավաքվել: Յերեխաները փսփսում էին ծիծաղում, շատախոսում:

Աղոտ վառվող ճրագները յերկար ու տարրինակ ստվերներ եյին արձակում: Այդ անծանոթ շրջանը, բայց գլխավորապես հառաջիկա քննությունների և բժշկական քննության յենթարկվելու միտքը, թշվառ յերեխայի վրա ճնշող տպավորություն ելին թողնում, վոր առանց այն ել վախեցած ու ճնշված եր:

Ինչ վոր նոր, անծանոթ զգացմունքներ եյին համալում նրան, նոր մտքեր եյին ծնվում նրա գլխում, և քունը փախչում եր նրա աչքերից:

Առավոտյան, յերբ հնչեց զանգակի ձայնը, Նաման բուրից շուտ վեր թռավ:

Նորյեկներին կանչեցին գրասենյակ: Այդ սենյակը մտնելիս Նաման ինքն իրեն կորցրել եր:

Ուսուցիչ Իսմաիլ-Էֆենդին, վոր աղջիկներին դպրոց եր բերել, վարիչի հետ խոսում եր մի բանի մասին:

— Վոչ, վոչ չորսին չենք կարող ընդունել: Մենք ձեր գյուղին յերեք տեղ ենք տվել: Մյուսների համար ել պետք ե տեղ թողնել: Ղրիմում շատ գյուղեր կան:

Վարիչի այս խոսքերը խոցեցին Նսմայի ուղիղ սիրտը փորովհետև Նսման վախենում էր, վոր չընդունվողները թվում կլինի ինքը:

— Ձեզ հետ յեկած աղջիկները սրանք են: Բարև ձեզ: Մոտեցեք, տեսնեմ, ասաց ուսուցիչը, դառնալով ներս մտնող աղջիկներին: Նսման կռացավ, վորպեսզի համբուրի ուսուցչի ձեռքը:

— Հարկավոր չե՞, պետք չե՞, գավակս: Անունդ ի՞նչ ե՞:

— Նսմա:

— Դպրոցն ավարտել ե՞ս:

— Այո:

— Ապա ինչո՞ւ ես այդպես նիհար: Բա ինչպե՞ս պետք ե սովորես:

— Նսման սառավ: Ուսուցչի տված հետևյալ բոլոր հարցերին, նա ել չկարողացավ պատասխանել: Բայց նրան ոգնության հասավ Իսմայիլ-Նֆենդին: Նա ցած ձայնով ուսուցչին ինչ վոր մի բան ասաց:

Ուսուցիչն ուշադիր կարդաց Նսմայի դպրոցական վկայականը, գլուխը շարժեց ու ասաց:

— Բանից դուրս ե գալիս, վոր աշխատասեր աղջիկ ես, խելոքս:

Նսման թեթևացած շունչ քաշեց: Այժմ նա արդեն կրկին կարող էր պատասխանել հարցերին: Բոլոր հարցերին նա մյուսներից ավելի լավ պատասխանեց: Յերբ գրասենյակից դուրս յեկան, Իսմայիլ-Նֆենդին գովեց Նսմային:

— Ա՛յ իմ խելոքս, դու դուր յեկար ուսուցիչներին:

Սա վերջնականապես հանգստացրեց ու զվարթացրեց Նսմային:

Աղջիկները շրջապատեցին Իսմայիլ-Նֆենդուն և սկսեցին հարց ու փորձ անել, թե չերկար կմնան եստեղ, շուտով նորից կտեսնեն իրենց ծնողներին:

Բայց այդ հարցը չեր զբաղեցնում Նամային: Նրա ուշադրութիւնը ուրիշ հարցի եր մեխւած, — արդյոք բժիշկը շո՞ւտ կգա, իրենց նայելու: Ասացին, վոր բժիշկը մի ժամից հետո կգա: Այս մի ժամը նրան անսահման յերկար եր թվում: Ձե վոր ժամը ամբողջ 60 րոպե ունի:

Վերջապես բժիշկն յեկավ նոր աղջիկներին կանչեցին:

Թշվառ Նամա: Իր ծնողների մահից հետո, դա դեռ չբրբեք ալգպես չեր հուզվել, ինչպես ալժամ: Նախորդ ամբողջ օրը և ամբողջ գիշերը, Նաման ալգ րոպելի մասին եր մտածել: Յեվ ահա հնարքը գտել եր. — վորպեսզի ավելի լիքն ու ավելի առողջ յերևա, իր ունեցած բոլոր սպիտակեղենն ու շորերը հագել եր իրար վրա:

Նաման յերկչոտ քայլերով մտավ բժշկի ընդունարանը:

— Անունդ ի՞նչ ե: Վորևե տեղդ ցավում ե:

— Վոչ մի տեղս, վոչ մի տեղս չի ցավում, մի շնչով արագ ասաց Նաման:

— Տեսնե՞նք: Հագա:

— Միքիչ մըսել եմ, — շտապեց բացատրել Նաման:

— Ինչո՞ւ յես եղքան շատ շոր հագել: Դու յերևի սառել ես:

— Մըսում եմ... վոչ... յես առողջ եմ բժիշկ: Յես հիվանդ եյի հիմա բոլորովին անցել ե:

— Վոր վազում ես, սիրտդ չի՞ խփում, չի՞ ցավում:

— Վոչ բժիշկ. իմ սիրտը շատ առողջ ե, նա չի խփում ու չի ցավում:

— Ապա, աղջիկս, եդ ինչո՞ւ յես դու եղպես նիհար: Ներսդ վորևե տեղ չի ցավում:

Այս հարցը Նսմային նեղը գցեց՝ Նրան թվում էր, թե դա չափազանց դժվար հարց է և պատասխանելն անհնարին։ Մինչ այդ բժիշկը թխկթխկացնում էր նրա կուրծքն ու մեջքը, հետո խողովակով լսում էր։ Նսման միջիչ հանգստացավ և կրկին սկսեց հավատացնել։

— Վոչ մի տեղս չի ցավում, յես բոլորովին առողջ եմ։ Յես նիհար եմ, վորովհետև մեր գյուղում սաստիկ սով էր։ Յես վոչ հայր ունեմ, վոչ մայր։ Յես վորը եմ։ Բժիշկ, յես լավ կսովորեմ։

Արցունքի միջանի կաթիլներ Նսմայի աչքից գլուխ-ցին և ընկան բժշկի ձեռքի վրա։

Իսմայիլ-Շֆենդին պատրաստվում էր գյուղը վերադառնալու։ Աղջիկները հավաքվել էին նրա շուրջը, Նրանցից ամեն մեկը ուսուցչի միջոցով բազմաթիվ պատվերներ էր ուղարկում իր ծնողներին։ Նրանք բոլորն էլ առաջին անգամն էր, վոր բաժանվում էին ընտանիքից և այժմ միայն սկսեցին իրենց անկախ կյանքը։ Հասկանալի չէ, վոր նրանք մենակութուն, անոգնականութուն ու նույնիսկ չերկուղ էին գլուխ։ Նրանցից ամեն մեկը ուզում էր ոգտվել Իսմայիլ-Շֆենդու գնալուց, և վորեւե բան պատվիրել իր ծնողներին։

— Իսմայիլ-Շֆենդի, խնդրում եմ մայրիկիս ասա, թող տաք փաթաթան ուղարկի, եստեղ ցուրտ է։ Բոլորին բարևիր։

— Իսմայիլ-Շֆենդի, չմոռանաս, հայրիկիս ասա, վոր բաժակ ու գդալ ուղարկի, հա, նաև տաք վերմակ։

— Շո բոլորը դատարկ բաներ են։ Ծնողներին ասա թող դառերմա ուղարկեն։ Հա, ասա վոր չմոռանան ընկուղ էլ ուղարկել։

Իսմայիլ-Եֆենդին, այս բոլորը լսելով, միայն ժրպտոււմ եր:

— Լավ, լավ: Բոլորը կասեմ, չեմ մոռանալ: Բոլորը կողարկենք, պառւղներ ել, բաքմազ ել: Դուք ել ենալես չանեք, վոր յես ձեր տեղ կարմրեմ: Ձեզ լավ պահեցեք, լավ սովորեցեք: Չմոռանաք, վոր ապագայում դուք պետք ե աշխատեք մեր խեղճ ժողովրդի համար, և վոր ձեզ վրա մեծ պարտականութիւն կա մեր ժողովրդի հանդեպ:

Կառապան Ոսմանը շարժեց կառքը: Աղջիկները տխուր, գլուխները կախ կանգնած են, լաց լինելու պատրաստ: Նրանց մեջ կանգնած ե և Նսման: Աղջիկներից միայն նա չեր հանձնարարութիւններ անում: Նա վոչ վոք չուներ, վոր նրա մասին հոգ տաներ:

Իսմայիլ-Եֆենդին միքիչ զարմացած, վոր նա լուռ ե դարձավ նրան.

— Նսմա, բա ինչո՞ւ դու վոչինչ չես ասում:

Նսման սկզբում կարծես թե չլսեց: Հետո, յերբ սալ-լակն արդեն բակից դուրս եր գնում, Նսման ուշքի չեկավ, և վազելով մոտեցավ սալակին: Նրա ալտերը վառվում եյին, կուրծքը ծանր եր շնչում:

— Իսկ դու, Նսմա, ինչ ես ասում,—կրկնեց Իսմայիլ-Եֆենդին,—դու վոչինչ չես ուզում:

— Ձե, յես վոչինչ չեմ ուզում: Բարեկիր հորեղբորս, կնոջն ել: Թող ներեն ինձ, յեթե մեղավոր եմ յեղել: Նրանք ինձ ազատեցին սովամահութիւնից:

Նսման կմկմաց: Աղջիկները զարմանքով նրան եյին նայում:

— Գիտես ինչ, Իսմայիլ-Եֆենդի: Գլուղում մեր հարեանների մոտ մի աղջիկ ե ապրում Ուսալինն,—նա ել

ե վորբ: Հոգ տար, չմոռանաւ նրան, — խնդրիր ուսուցիչներին, վոր նրան այստեղ դպրոց ընդունեն:

Իսմայիլ-Նֆենդին բռնեց Նսմայի ձեռքերը ու համբուրելով նրա աչքերն, ասաց.

— Շատ լավ, խելոքս, կասեմ: Նրան ել կբերենք աստեղ դպրոց: Յտեսություն յերեխաներ:

Բայց Նսման դեռ չէր վերջացրել:

— Նստեղ, մեր գյուղում շատ վորբեր կան: Յես նրանց չեմ մոռանալ:

Բառերը դժվարությամբ ելին դուրս գալիս նրա կրծքից: Նա ելի շատ բան եր ուզում ասել, բայց բառեր չէր գտնում: Արցունքները խոզդում ելին նրան:

Մյուս դպրոցականները խոնվել ելին սալլակի մոտ և ուզում ելին խմանալ, թե ինչ ե կատարվում այնտեղ: Նրանք բոլորը հետաքրքրությամբ նայում ելին Նսմայի դեմքին:

— Յտեսություն, նորից ասաց Իսմայիլ-Նֆենդին:

Ձիաները շարժվեցին:



1586C
H II
38751

Չ Ո Ր Ա Ն

Այվազը—մի յերիտասարդ թուրք, ծեր Արիբուկայի քինայի հովվի ոգնականը, կանգնած էր ուղղաձիգ ժայռի կատարին և մտազբաղ նայում էր հեռուն։ Հեռվում, ցածում տարածվում էր Ղրիմի կանաչ ափը։ Աջ կողմը լերկնադույն մշուշում արծաթին էր տալիս Սեմեիչայի գեղահրաշ քարափները—Մոնախ և Դիվո ժայռերի հետ։ չորանի ուղիղ վտառների տակ, իրար վրա ելին բարդվում Ալուպկայի տները, իսկ ձախ կողմը մոտիկ բլուրների լեռներ կապտին էր տալիս ծանր Ալու-դաղը, վոր նման էր փորը ծովի մեջ խրած արջի։

Այդ ափերից դեպի հեռուն տարածվում էր անսահման, մութ-կապույտ ծովը, զարդարված փրփուրի, պրսպղացող բաշերով ձեռու-հեռու, աշխարհի ծայրում, կապտավուն-հալվող միլամի մեջ, ձուլվում էր լերկնքի հետ։ Այվազի սրտես հայացքը նրա վրա հազիվ էր նշմարում առաջատանավերի սպիտակ թևերը։ Թարմ քամին անցնում էր Յալլայի վրայով և շոյում էր հովվի արևառ դեմքը։

Յալլայի կանաչ մարգագետիններում կյանքն անցնում էր դանդաղ ու հանգիստ։ Վոշխարի ահագին հազարզլխնյան հոտերը ամբողջ ամառը արածում էյին նրա ուժղ-համող խոտը—իսկ հոտերը ուշադիր պահապանում էին մռայլ հովիվ-չորբանները—ուժեղ, սև թուրքեր, նրանք

հազնուում եյին ձյուլթով հազեցած քաթանե շորեր և ծանր տրեխներ — կաշվի կտորներ, վոր փոկերով կապում եյին վոտքներից: Ամառվա վերջը մոտենում եր. լեռներն ավելի հաճախ եյին պարուրվում սառն ամպերով, կորչում մշուշի մեջ, անձրևն ավելի հաճախ եր թրջում չորաններին ու վոչխարներին: Շատ ավելի հաճախ եյին ստիպված լինում, վատ յեղանակի սլաճառով բինաներն իջնելու — վայրենի քարերից շինած աչդ անհարմար հյուղը: Մոտենում եր ամառային արոտատեղիներից ցած — դեպի գյուղերն ու հովիտներն վերադառնալու ժամանակը:

Իր յերկար, ծալըրդ գալիկ (կարթանման) հովվական մահակին հենված, Այվազը մտածում եր այն մասին, վոր շուտով հաշիվ կստանա իր ամբողջ տարվա աշխատանքի համար: Զորանները վոչ թե փող եյին ստանում իրենց աշխատավարձը այլ վոչխար: Այվազը հոտի միջից հինգ վոչխար պիտի բռներ: Նա վաղուց արդեն աչքադրել եր և նախրաթողին (նոյեմբ 8/21) եր սպասում, յերբ հոտը բինի մոտի մի առանձին տեղ եյին քշում և աթաղասիները՝ ծեր հովիվները թույլ եյին տալիս յերիտասարդ հովիվներին բռնել իրենց աշխատավարձ վոչխարներին:

Կարծես թե, ի՞նչ — դատարկ բան ե վոչխար բռնելը: Սակայն Այվազը դառը փորձով գիտեր, թե ի՞նչ դժվար ե դա:

Հեշտ եր իհարկե վոչխարն իր մահակի գալիկով բռնելը, այդ բանը Այվազը շատ լավ գիտեր: Բայց չե, պահանջվում եր վոչ թե մահակով բռնել ուղածդ վոչխարը, այլ ձեռքով, սա արդեն ավելի դժվար եր: Անցյալ տարի վորոշված ժամանակում Այվազին հաջողվեց միայն յերկու վոչխար բռնել, — ահա այս եր նրա աշխատած մի տա-

դուռ: Բայց այս տարի նա լավ ուսումնասիրել էր վոչխարների խորամանկութունները և հույս ուներ հոտից ընտրել հինգը:

Միայն մի բանից էր վախենում նա. Աբիրուլա աթաղասը բարկացկոտ ու խիստ ծերունի չէր: Ամառվա ընթացքում գալլերն Այվազի պահած հոտից տամնուհինդ վոչխար եյին տարել: Այն ժամանակ Աբիրուլան ասաց, վոր յեթե ելի հինգ վոչխար գալլին տա Այվազը, ապա նրան տուրու ել բան չի մնալ:

Հասկանալի չե, վոր այսպիսի դգուշացումից հետո, Այվազը սկսեց խիստ ուշադիր հետևել իր հոտին: Բայց վոնց հետևես, վոր աղատվես: Գալլը շեյթանի պես խորամանկ է, մանավանդ աշնան մոտ, յերբ սովում է ու մրսում:

Ինքը գորշ, գորշ քարերի մեջ թաքնվում է ու սպասում, մինչև հոտը մոտենում է իրեն, են ժամանակ սուս ու փուս ընկնում է հոտի մեջ ու խեղդոտում է աջ ու ձախ: Վայ է, յեթե հովիվը աչքաթող արավ, ենպիսի ավերածութուն կգործի, վոր հուսահատութունից գլուխը քարերովը կտաս:

Խոտ կրծոտելով, ժայռոտ քարքարուտով կամաց առաջ էր շարժվում հոտը: Տաք արևից ու քնաբեր գեփյուռից թմրած մի թփ տակ թաքնվել էր Ահմեդը—մուս փոքրիկ հովիվը բըղոտ գամբռները հոտի հավատարիմ պահակներն էլ եյին ննջում: Ահա այսպես նրանք չտեսան փորձանքը: Չնկատեցին, թե ինչպես մալը գալլն ընկավ հոտի մեջ և սկսեց հաշիվ մաքրել վոչխարների հետ:

Յերկուտղից վոչխարների ձախը կտրվեց:

Խոնվում, հավաքվում ու կծիկկծիկ են ընում բայց

չեն ցրվում—փախչում. հիմար կամակորուժուն—նրանք ցրված ավելի չեն սարսափում, քան թե խմբված: Գալլն ամբողջ հոտը կխեղդոտեր, բայց այծերը աղմուկ բարձրացրին: Հոտի մեջ այծերն ամեն բանի առաջնորդներն են, վորտեղ նրանք, ենտեղ ել ամբողջ հոտը: Մի տեղ քշելիս, թե իրարից ջոկելիս, չորանը առանց այծերի նուճնն ե, ինչ վոր մարդ առանց ձեռքերի: Իսկ նրանք խելոք են և լսում են չորաններին ինչպես փոքրիկ չ'րեխաներ:

Այդպես ել հիմա չեղավ. բարձր մկկացին, թռան հոտի մեջ և սկսեցին վոչխարներին ցրել: Պառավ, մեծաչեղջուր նոխազը թափ տվեց մորուքը ցատկեց, վաղ տվեց մի կողմի վրա և հոտը քաշեց իր չետևից: Վոչխարները խոնվեցին նրա չետևից, իսկ բրթոտ շները, վերջապես հասկանալով, թե ինչ ե պատահել, խռպոտ հաջոցով, կարծես մի հրամանով վրա թափվեցին ու շրջապատեցին գայլին: Այվազն սթափվեց և արյունը գլուխը տվեց: Մահակը պտտեցնելով հարձակվեց գորշ թշնամու վրա: Գլուխը կորցրած, վախեցած հոտը մի ըոպելում այծերի չետևից ցրվլ չեկավ մարգագետնում: Իսկ գամփոնները նեղ ողակով շրջապատեցին գայլին և թուլ չտվեցին իր արյունլվա վորսի միսն անուշ անել, մի ըոպելից հետո գլուխը ջարդած, փորը պատռած ընկած եր գայլը վոչխարների մոտ: Այվազն ել կանգնած նրանց կողքին նայելով իր սպանված վոչխարներին դառը-դառը լաց եր լինում:

Բայց չերկար մտածելու ժամանակ չկար:

Հոտը վախեցած ու սարսափած ալս ու ալն կողմն եր ընկնում և չեր իմանում ուր փախչի: Այվազը հեռա-

ցավ գալից և սկսեց հոտը հավաքել, հեշտ բան չե հո հազար վոչխար հավաքել մի տեղ նա ամբողջ որը կտանջվեր, չիթե նորից ոգնության չհասնելին այծերը:

Յիւլ, ցիւլ, ցիւլ, ցիւլ, կանչեց Ալվազը և մորուքավոր նոխաղներ լսելով այս ձայնը իսկույն չեկան դեպի նա: Սիրուն գլուխները թափահարելով նոխաղների յետևից վազեցին այծերը վոր արդեն հանգստացել ելին և հասկացել, վոր իրենց թշնամին սպանված ե: Իսկ նոխաղների ու այծերի յետևից կրոր կողերը խիտ կպնջնելով իրար խռնվեցին և գլխակախ վոչխարները:

Իրարանցումը վերջացավ, բայց չերկու վոչխար պակասեց: Ալվազն արցունքը պահել չեր կարողանում, նրա աշխատավարձի հինգ վոչխարից Արիբուլան ես չերկու խեղդածներին դուրս կգար:

Նլի կորավ խեղճ չորանի աշխատանքը:

Արիբուլան յերբեք չեր ների այս փորձանքը, — գլուղն այս տարի չափազանց մեծ փնաս կրեց:

Ալվազը սատկած գալին քարշ տվեց դեպի ձորի բերանը և վոտքով հրելով գցեց անդունդը: Յերկար ժամանակ նա կանգնած եր վոչխարների մոտ և չեր իմանում ինչ անի, — վերցնի տանի Արիբուլայի մոտ և ամեն բան խոստովանի, — թե...

Չորանը անհավատ եր, նա ծերունիներից լսել եր, վոր գոլութլուն ունեն չար վոգիներ, ջիննիներ, վորոնք ծաղրոււմ են մարդկանց, այն ել եր լսել, վոր ջիննիները հաճախ գալթակղեցնում են մարդկանց — հրում են նրանց դեպի վատ արարքներ: Նա ուզում եր իր գլուխը մտած այդ վտանգավոր միտքը քշել իրենից, — այն ե, — իբր թե ինչ կլինի վոր հարեան հոտից մի գուլգ վոչխար գողանա:

Հարեան բինայի հովիվները, Մահմուդն ու Հուսեյնը պառավ ժարդիկ են ու վախկոտ, նրանց խաբելը դժվար է, նրանք ջիջնիներին շատ ավելի լեն հավատում քան Այվազը, վոր յերիտասարդ եւ քաղաքում նոր մտքեր ելսել։ Ծիշոն ասած, այն ժամանակ յերբ նա նստում եր սրճատանը մի բան խաղալու, այն ժամանակ նա ամենեւին չեր հավատում շելթանների ու ջիջնիների գոյությանը Միայն ալստեղ, Ջալլայի անապատներում, կասկածը մտավ նրա սիրտը,— չլինի թե իսկապես ամեն մի խճի տակ, ամեն մի ճեղքածքում մի սատանի ճուտ կա թագնաված, վոր ուզում ե խեղճ չոբանին մի վատութիւն անել։

Ախ, ինչպես չեն սիրում գողերին Յալլայում—սոսկալի կերպով չեն սիրում։ Ու հասկանալի չե թե ինչու, չեթե չորքոտանի գալից վոչխարը պահպանում են, ապա յերկոտանուց վոչ մի կերպ չեն փրկիլ։ Բոլոր շներին ճանաչում են, վոչխարների բոլոր սովորութիւնները գիտեն։ Ինչպես կարող ես հետեւել, թե հազար գլխից մեկը չի կորել։ Վոչխարներն որական մի քանի անգամ համբելու փոխարեն ավելի հեշտ չե, միանգամ ընդ միշտ վոչնչացնել գողութիւնը։ Անդունդի սրածայր քարերը շատ-շատ բաներ կարող կլինեյին պատմել—կարճ ու սոսկալի դատերի մասին,— խոր գիշերին, գորշ մշուշի մեջ։

Այվազը փշաքաղվեց։ Վաչ յեթե ձեռքներն ընկնեմ, ել կենդանի չեմ աղատվիլ։

Բայց վոչխարների կորուստը նրան հանգիստ չեյին տալիս։ Արեւն արդեն մութ սալերին եր մոտենում, հոտը տուն տանելու ժամանակն եր։ Թշվառը սիրտ չարավ սատկած վոչխարներն ուսը գցել ե տանել ահեղ Աբիբուլայի

մոտ: Կամացուկ, վախենալով, վոր ինչ վոր տեղ կորած Ահմեդը կարող ե նկատել, նա վոչխարները քարշ տվեց ձորի անդունդի ափը և վոտքի մի հարվածով ուղարկեց նրանց գալլի չետեից: Թող լինի, ինչ լինելու չե:

Մեր նոխազը, տեսնելով, վոր մութը վրա յե հասնում, հանդիսավոր կերպով ճանապարհ ընկավ դեպի հեռավում չերեացող բինան և նրա հետեից ինչպես մի կենդանի ահագին վոչխար շարժվեց և հոտը: Թփերի տակ քնած Ահմեդն ել դուրս չեկավ, և յերկու չորանները հոտը տուն քշեցին:

Այդ գիշեր Այվազը չկարողացավ քնել, և ինչ բուն կգար նրա աչքին:

Յածր խրճիթում, ծխացող ոջախի շուրջը նստած ելին և նրանց և հարևան բինայի չորանները—վեց մուլլ ծերունիներ մորթե գլխարկներով և գոտիներից դաշույն կապած: Նրանք խորոված ելին անում, յերկար ժամանակ ընթրում ելին, անվերջանալի և սոսկալի հեքիաթներ պատմում ջիննիների, կախարդների և թագքրած գանձ գտնելու մասին: Միայն յերբ բոլորովին գիշեր եր, նրանք ցրվեցին և Աբիբուլան պարկեց քնելու:

Այվազն այնքան սպասեց, մինչև վոր աթաղասու միակերպ խռմիոցից հասկացավ, վոր նա արդեն քնած ե, ապա վերցնելով իրիկվանից պատրաստած վոչխարի մորթին ու իր մահակը չորանը դուրս սողաց բինայից: Թագնվելով նա գնաց դեպի հարևան բինան և ոտար հոտը տեսնելով, վոչխարի մորթը գցեց ուսերին:

Շնեքը իմացան նրա գալը, բաց տեսնելով վոր ծանոթ մարդ ե, առանց հաջելու հեռացան: Այվազը մոտ սողաց հոտին, մահակի գալիկով բռնեց սալիտակ գառան

վոտքից: Սա զարթեց, խղճալի կերպով մայեց և հոտն իրար անցավ: Բայց Այվազը մոտ քաշեց քացի-քացի անող գառանը ու իր գոտով վոտները կապելով, գետին զցեց:

Յերկրորդը բռնելիս ավելի վատ չեղավ: Վոչխարը զալիկից դուրս ընկավ և հոտը տալնուվրա չեղավ: Չորաններից մեկն արթնացավ և ձայն տվեց: Այն ժամանակ Այվազն ամբողջ մարմնով դողալով վախից վեր բարձրացավ գետնից և սոսկալի ձայնով բայեց:

Ծեր չորանը ահ առած, սկսեց Ալլահին ոգնության կանչել, ու վորոշելով, վոր վոչխարի կերպարանքով ջիննի չե մտել հոտի մեջ, շտապով մտավ բինան: Իսկ գողն ել հենց այդ եր ուզում մի ուրիշ վոչխար ել բռնեց, վերադարձավ իր հոտի մոտ և գողացած վոչխարները խառնեց իր հոտին:

Գուցե բանը դրանով ել վերջանար, չեթե առավոտը հարևան բինայի աթաղասը չմտածեր իր վոչխարները համարել: Գիշերն իր տեսած չար վոգին կասկածելի չեր թվում,—իսկ չեթե դա չար ջիննի չեր, այլ չար մարդ: Ուստի հենց լուսացավ թե չե, աթաղասը հրամայեց իր հոտը ճեղքի մոտ քշել: Ճեղքը պատի մոտ շինած մի չեռանկյունի անցք եր—վորտեղից վոչխարները կարող ելին անցնել մեկ-մեկ: Այդ անցքով անցկացնելով վոչխարներին համարում են և միևնույն ժամանակ մեկ-մեկ նայում, դիտում նրանց:

Վոչխարները յերկար ժամանակ խռնվել ու հրհրում ելին, այդ իրենց համար սարսափելի տեղի մոտ և վոչ մի կերպ չելին անցնի ճեղքով, չեթե խելոք նոխազը չլիներ, վորը շատ անգամ եր այդպիսի փորձանքներ տեսել: Համենայն դեպս, չեղյուրներն առաջ ցցելով նա քաջաբար

անցավ նեղ ճեղքով: Նրա հետևից թռչկոտելով և իրար առաջ ցատկելով անցան այծերը, իսկ նրանց հետևից ամբողջ հոտը—անհամբեր կոխկռտելով, կլավելով, կողերով հարևանին սղմելով,—կարծես թե այդ նեղ անցքից այն կողմը նրանց մի առանձին բավականութիւն եր սպասում:

Աթաղասը կանգնած եր մյուս կողմը, հաշվում եր և սրատես հայացքով նայում վոչխարներին ու բռնում նրան վորի մարմնի վրա վերք երնկատում: Մյուս չորանը ունեւիքով վերքից վորդեր եր հանում, իսկ չերբորդը մի լեղջորից վերքի վրա կապույտ քար—արջասպ եր ածում: Նրանք այդպես անց կացքին ամբողջ հոտը և իհարկե նկատեցին վոր չերկուսը պակաս ե: Այն ժամանակ աթաղասը վորոշեց գտնել գողի հետքը:

— Մահմուդ, ասաց նա իր հովվին, մեզ մոտ գող ելույս ընկել: Գնա, ման չեկ, բոլոր հոտերը տես—արդյոք մեր գառները նրանց մեջ չեն:

Նրանք գնացին զանազան կողմեր: Աթաղասը մոտեցավ Աբիբուլայի հոտին և սկսեց դիտել վոչխարներին:

— Ե՛հ, աղաղակեց Ալվազը ծերունուն, գնա քո հոտի մոտ ի՞նչ բան ունես ուրիշների բինում: Խո՛չ ես ուզում:

— Վոչինչ չեմ ուզում, իմ գառներն եմ ուզում,— ձայն տվեց սա:

— Գնա, թե չե Աբիբուլային կկանչեմ, փորձեց սպառնալ Ալվազը, զգալով վոր իր վոտքերը սառչում են: Բայց արդեն ուշ եր, ծեր Հուսեյինի արծվի աչքերը արդեն տեսան իր վոչխարներին: Նա ճշաց, մանր կոճակներ շարած գոտին պնդացրեց և չերիտասարդի նման հարձակվեց Ալվազի վրա:

Կատաղի պայքարով չերկուսն ել գլորվեցին խոտի վրա: Ելի մի քանի բոպե,—և Այվազի մարմինը քարերից ծվեն-ծվեն ընկած կշինեք աշխտեղ—ահուելի ձորի հատակում:

Բայց այդ ժամանակ ժոտեցավ Աբիբուլան:

— Եդ ի՞նչ ես անում, գողաց Աբիբուլան, ինչո՞ւ չես ծեծում իմ չորբանին:

Նալիր, ինքդ տես, այ իմ գառները, պատասխանեց Հուսեյնը ժատով ցույց տալով հոտի մեջ իր գառները

— Յես նրան ձորը կզցեմ. Յալլայում գող չի չեղել և չպիտի լինի:

— Դու ի՞նչ գիտես, վոր նա չե գողացել:

— Վոչ դու կանես, վոչ Անմաղը, չես ձեզ ճանաչում եմ: Իսկ նա չերիտասարդ ե. ընդամենը չերկու տարի չե, վոր աշտեղ ե. քաղաքում թափառում եր, խիրսիս (գող) ե դարձել:

Աբիբուլայի դեմքը մթնեց:

— Եդ ե դրա ճանապարհը, ասաց նա, ձեռքը թափ տվեց և շուռ չեկավ Այվազից:

Հուսեյնը Այվազի շորից բռնեց և քարշ տվեց անդունդի մոտ: Բայց նա չոգեց, ամբողջ մարմնով քարերով եր դիպչում և վռնում, ճչում:

— Ներիր, ներիր, Աբիբուլա: Գալլը չերկու գառը խեղդեց, մեղքս չեկավ:

Յես քեզ մոտ չերկու տարի չե ծառայում եմ, ընդամենը մի գուլգ վոչխար եմ վաստակել:

— Ուրեմն դու ուզում ելիր պակասը հարևաններից գողանալ,—մռալ հարցրեց Աբիբուլան,—եդպիսի չորբանն ինձ պետք չի:

Բայց այստեղ մեջ մտավ և Ահմեդը:

— Աթաղաս, ասաց նա, սպասիր: Այվազը լավ չորան ե և հավատարմությամբ ծառայել ե քեզ... Ձեր գյուղում հազար գլուխ վոչխար կա, իսկ դու նրա վարձից հինգից չերկուսը չես ես պահում: Չորանին դու ինքդ ես մղել դեպի գողություն:

Արիբուլան մռայլ—մտածության մեջ ընկավ, նրա թավ հոնքերը կախվեցին մութ աչքերի վրա:

— Թող այդպես լինի—ասաց նա վերջապես—Թող նրան, Հուսեյին: Եդ բանում չես ել հմ մեղավոր: Բայց ինչո՞ւ նա չխոստովանեց ինձ: Յես կներեյի նրան... Նա մեզ մոտ ել գողություն չի անիլ, նա կգնա Յալլայից քաղաք ու ել յետ չի գալ:

Ու չորանները լուռ հեռացան Այվազից, վոր անմուռնչ հուսահատությամբ սառել, քարացել եր անդունդի արին...



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220038751

(134)

A 38

Татарна Эста

— Чебан —



ԳԻՆՆ Ե 20 ԿՈՊ.